



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՇԱԼՈՒՅՍԻ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԴՈԱԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի «Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ «Մաթեմատիկա» /13 դասաժամ/, «Ինֆորմատիկա» /10 դասաժամ/, «Տեխնոլոգիա /տղաներ՝ 8 դասաժամ/», «Երաժշտություն» /3 դասաժամ/ և «Ֆիզկուլտուրա» /11 դասաժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների ու մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- 3) անձը հաստատող փաստաթուղթ,
- 4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- 5) ինքնակենսագրություն (Ձև 5),
- 6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև գինվորական գրքույկ,
- 8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- 9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի հունիսի 1-ից 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10⁰⁰-ից 15⁰⁰-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը կկայանա 2022 թվականի հունիսի 17-ին, ժամը 14⁰⁰-ին «Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ԴՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել 098-17-36-65: